

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-10-6-Ա

ք. Երևան

11.11.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի նոյեմբերի 11-ի նիստում քննարկեց 2021 թվականի սեպտեմբերի 1-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ BETA GIDA SANAYI VE TICARET ANONİM ŞİRKETİ ընկերության (Hacı Sabancı Organize Sanayi Bölgesi Osb, Fuzuli Caddesi No:1, Sarıçam Adana, TR) «BESTA» (IR1510990) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված՝ 29-րդ և 30-րդ դասերի մնացած մյուս ապրանքների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «best» (Բեսթ Ֆուդզ Լիմիթիդ BEST FOODS LIMITED Village Norta, Tehsil-Indri, District-Karnal 132041 (Haryana), India IN, N 22285) և միջազգային գրանցման հիման Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «Bestra» (Yang Guoxiu No.809, Hutang Road, Fenghuang park economic development zone, Yongzhou city Hunan Province (CN) IR 1237766)ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ և 130-րդ կետերի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները և այն նիշերը, որոնք ունեն ձայնային նմանություն: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանի «Besta» բառային տարրը իր ձայնային նմանությամբ զուգորդվում է ավելի վաղ ապրանքային նշանների հետ, որոնց նմանությունը որոշվում է իրենց արտասանությամբ, նշանը կազմող մոտ և համընկնող

հնչյունների մոտիկությամբ, այն է՝ նիշերը զուգորդվում են իրենց ձայնային նմանությամբ, մի պարագայում տարբերվում են վերջին ձայնավերորոպ (best Besta), իսկ մյուսի դեպքում՝ ավելի վաղ ապրանքային նշանի մեջ առկա բաղաձայնով (Besta Bestra):

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում մերժված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «best» (No22285) և միջազգային գրանցման հիման Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «Bestra» (IR1237766) ապրանքային նշաններին:

Փորձաքննության բաժնի պետը պնդեց, որ մերժման մասին որոշումը իրավաչափ է և համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն:

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված «BESTA» (IR1510990) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ